ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (+374) 0281 2 25 22**

,, _____,, ,,_____,, 2022թ N _____

ԿԱՆԱՉ ՀԱՅԱՍՏԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ԹԵՀՄԻՆԵ ԵՆՈՔՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ենոքյան

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հունվարի 31-ի առցանց հարցմանը՝ տեղեկացնում ենք, որ Եղեգիս գետի վրա գտնվող փոքր հէկերի ջրօգտագործման թույլտվություններով ամրագրված ռեժիմների և դրանց հնարավոր փոփոխության ուսումնասիրության, ինչպես նաև փոքր հէկերի գործունեությունը կանոնակարգող անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագծի ներկայացման նպատակով, շրջակա միջավայրի նախարարի 2020թ. սեպտեմբերի 28-ի N369-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմում ընդգրկված էին նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության աշխատակիցները:

Ստորև ներկայացնում ենք միջգերատեսչական աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները.

1.«Գոռնար» փոքր հէկ-Տրանսֆորմատորից յուղի արտահոսքը բացառելու համար նախագծով նախատեսված յուղորսիչ համակարգը բացակայում էր: Բացակայում էր նաև կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախագծով նախատեսված անջրաթափանց հորը, առկա էր գյուղական փայտաշեն զուգարան՝ փոքր հէկի տարածքից դուրս: Ջրառի կետերում ջրաչափեր առկա չէին (ըստ տնօրենի՝ դրանց տեղադրման անհնարինության պատճառով), Եղեգիսից եկող խողովակաշարերի վրա մինչև կայանային շենք մտնելը առկա էին ջրաչափեր, ինչը հնարավորություն չի տալիս Արփա գետից ջրառի ծավալի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալ:

2.«Տիգրան Մեծ» փոքր հէկ-Գտնվում է «Եղեգնաձորի» պետական արգելավայրի անմիջական հարևանությամբ, որի սահմանն անցնում է Եղեգիս գետով, ուստի բաց հողի վրա ջրհավաք ավազանի առկայությունը կարող է արգելավայրի տարածքում գրունտային ջրերի ավելացման պատճառ հանդիսանալ:

Փոքր հէկի ջրընդունիչ գլխամասային հանգույցում շինարարատեխնիկական մասով առկա էին նախագծից շեղումներ: Ջրթափ պատվարը պետք է ունենար 8,6մ ընդհանուր երկարություն և 2 սեկցիա՝ բաժանված բետոնե միջնապատով, սակայն փաստացի սեկցիաների բաժանված չէր և ըստ քաղշին տեսուչի՝ նախատեսվածից երկար էր, բացի այդ փակված էր տղմազտարանի ավտոմատ խուցը: Ըստ նախագծի ձկնուղին պետք է լինի աստիճանաձև՝ կազմված մուտքամասից, ելքամասից ու 7 բաժանմունքից, ընդհանուր երկարությունը 10,7մ, սակայն փաստացի կազմված էր 18 բաժանմունքից և մոտ 35մ երկարություն ուներ:

3.**«Եղեգիս 2» փոքր հէկ**-Գլխամասային հանգույցում ջրընդունիչը պատվարի ձախ կողմում էր, որի մուտքի դիմաց մանրանցք ձկնապաշտպան ցանցի փոխարեն մոտ 3սմ միջճաղային հեռավորությամբ ճաղավանդակ էր տեղադրված: Ըստ նախագծի ձկնանցարանը 10մ ընդհանուր երկարությամբ աստիճանաձև բետոնյա կառույց է, աստիճանների բարձրությունը 0,3մ, բայց փաստացի ձկնուղին ավելի երկար էր, իսկ աստիճանները նախատեսվածից բարձր էին, որը խոչընդոտ էր հանդիսանում բոլոր ձկնատեսակների ազատ տեղաշարժը: Ջրընդունիչ հանգույցից ներքև գետի ափամերձ տարածքը շատ աղտոտված վիճակում էր, խողովակաշարը ամբողջովին թաղված չէր՝ ինչպես նախատեսված է նախագծով:

4.**«Գողթանիկ» փոքր հէկ**-Ըստ նախագծի գլխամասային հանգույցում ջրթափ պատվարը պետք է բաժանված լինի 2 սեկցիայի, սակայն իրականում այն առանց ջլատումների երկաթ-բետոնյա կառույց է: Ձկնուղին պետք է լինի աստիճանաձև, կազմված մուտքամասից, ելքամասից, 20 բաժանմունքից, որի երկարությունը պետք է կազմի 35,2մ: Փաստացի ձկնուղին բաղկացած էր 7 բաժանմունքից և ըստ քաղշին տեսչական մարմնի ներկայացուցչի՝ ուներ մոտ 6,5մ երկարություն, ձկնապաշտպան ճաղավանդակը ընդհանուր առմամբ համապատասխանում էր նախագծով նախատեսվածին: Էկոլոգիական առումով փոքր հէկի տարածքում առկա են սողանքային երևույթներ, բացի այդ այն հարակից է «Եղեգնաձորի» պետական արգելավայրին, ինչը կարող է պատճառ դառնալ արգելավայրի տարածքում գրունտային ջրերի ավելացմանը:

5.«Կարակայա» փոքր հէկ-Տրանսֆորմատորները չունեին յուղորսիչ համակարգ, անգամ նկատվում էր յուղի արտահոսք (տակը դույլ կար դրված): Խողովակաշարերից մեկը հիմնականում թաղված չէր, իսկ մյուսը՝ մասամբ էր բաց:

Ներքևի ջրընդունիչ հանգույցում ըստ նախագծի պատվարը պետք է լիներ 2 սեկցիայի բաժանված, բայց փաստացի առանց ջլատումների երկաթ-բետոնյա պատվար էր, տղմազտարանի բետոնյա պատերը կիսաքայքայված էին, ձկնանցարանը ըստ նախագծի պետք է լինի աստիճանաձև, կազմված մուտքամասից, ելքամասից, 10 աստիճանից, ընդհանուր երկարությունը 14մ, բայց փաստացի բաղկացած էր 6 աստիճանից, ընդհանուր երկարությունը մոտ 6մ: Ձկնապաշտպան ցանցը կրկին բացակայում էր, ջրընդունիչ խողովակի մուտքը փակված էր ընդամենը խոշոր ճաղավանդակով:

6.«Եղեգնաձոր» ու «Եղեգնաձոր-1» փոքր հէկեր-Ըստ նախագծի ջրթափ պատվարը պետք է բաժանված լիներ երեք հատվածների՝ յուրաքանչյուր հատվածի երկարությունը նախատեսված էր 13,4մ, իսկ ընդհանուր առանցքային երկարությունը պետք է կազմեր

40,2մ: Սակայն փաստացի ջրթափ պատվարը՝ սեկցիաների բաժանված չէր և չափումների արդյունքում պարզ դարձավ, որ այն չունի նախատեսվածին համապատասխան երկարություն:

Ըստ նախագծի ձկնանցարանը պետք է ունենար 18 աստիճան, մուտքամաս, ելքամաս, 32,9մ ընդհանուր երկարությամբ և 1,5մ լայնությամբ, սակայն փաստացի ձկնանցարանը բաղկացած էր 5 բաժանմունքից, որոնց ընդհանուր երկարությունը 7,5մ էր: Այսինքն՝ շինարարատեխնիկական մասով առկա էին անհամապատասխանություններ:

7.«Եղեգ» փոքր հէկ-Չնայած այցելության պահին գետում բավական ջրի հոսք կար և ձկնանցարանով ջրահոսքն ապահովված էր, բայց ձկնուղին՝ հետևաբար և էկոլոգիական թողքի կետը, փայտե արգելապատնեշով փակված էր՝ տնօրենի պատճառաբանմամբ ձուկ որսալու նպատակով: Բացի այդ, փոքր հէկի շենքում տեղադրված երեք տուրբիններից գործում էր մեկը, որը 2019 թվականին փոխարինվել էր նոր ավելի ժամանակակից ագրեգատով, ինչը համարվում է տեխնիկական վերազինում և համաձայն «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» օրենքի՝ կրկին ենթակա է փորձաքննության, սակայն հայտ չէր ներկայացվել և փորձաքննական դրական եզրակացություն առկա չէր:

8.«Գետիկվանք» փոքր հէկ-Այցելության ընթացքում պարզվեց, որ Եղեգիսի ձախ վտակից ջրառ չէր իրականացվում, քանի որ 2-րդ տուրբինը չէր աշխատում: Եղեգիսի ջրառի կետի գլխամասային ջրընդունիչ կառույցից մի քանի մետր ներքև՝ գետին խառնվում էր վտակ, որը մինչև միախառնվելը բաժանվում էր երկու ճյուղի և մի ճյուղի ջրերը համալրում էին փոքր հէկի ջրառի կետի ջրերը:

Վտակի այդ ճյուղի վրա իրականացվել էին հողաշինական աշխատանքներ:

Բացի այդ, չնայած ձկնանցարանում (որով ապահովվում է նաև էկոթողքը) բավականաչափ ջուր առկա էր, այնուամենայնիվ վերին բաժանմունքի վրա ձկնուղին փակ էր (տնօրենի պնդմամբ տիղմի պատճառով) և էկոթողքի ծավալը քիչ էր, ըստ բնապահպանական տեսչական մարմնի ներկայացուցչի, սահմանվածից պակաս էր:

Փոքր հէկում շինարարատեխնիկական մասով անհամապատասխանություններ առկա չէին:

9.«Եղեգիս-1» փոքր հէկ-Ձկնանցարան՝ ջրի մուտքի համար կառույց էր նախատեսված, որի մուտքի երկու եզրը պողպատյա անկյունակներով էին երիզված, որը հնարավոր է հարմարեցված էր պետք եղած դեպքում մուտքն երկաթյա թիթեղով փակելու համար (թիթեղն առկա էր, դրված էր կողքի): Գլխամասային ջրընդունիչ կառույցից վերև գետի հունում կային ավազաբլուրներ, որոնք հանված էին գետի ողողահունից, ինչը խոսում էր ջրային օրենսգրքով արգելված գետի հունի ձևափոխության մասին:

Փոքր հէկի շենքում տեղադրված էր 2 տուրբին, որոնք ըստ նախագծի պետք է լինեին չինական արտադրության պելտոն տիպի, սակայն փաստացի առկա էին «Mavel» ֆիրմայի բուլղարական արտադրության սինքրոն գեներատորով և չեխական արտադրության տուրբինով համալրված ագրեգատներ, ինչը համարվում է տեխնիկական վերազինում, իսկ համաձայն «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» օրենքի՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող տեխնիկական և տեխնոլոգիական վերազինումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

10.«Եղեգիս 3» փոքր հէկ-Ըստ քաղաքին տեսչական մարմնի ներկայացուցչի՝ շինարարատեխնիկական մասով առկա էին անհամապատասխանություններ. համաձայն նախագծի ձկնանցարանը պետք է լիներ բաղկացած՝ 1,8մ երկարությամբ և 1,4մ լայնությամբ

8 բաժանմունքից, սակայն փաստացի՝ աստիճաններն ունեին մոտ 2,3մ երկարություն և 1,2մ լայնություն:

Բացի այդ, վերջին աստիճանի բարձրությունը բավական մեծ էր, ինչը կարող էր խոչընդոտել վերին հոսանքներ ձկների տեղաշարժը:

Բացակայում էին ձկնապաշտպան ցանցավանդակները, առկա էր 3 աղբորսիչ ճաղավանդակ՝ մոտ 10սմ միջճաղային հեռավորությամբ, ինչը չէր կարող արգելել ձկների հայտնվելը ճնշումային խողովակաշար: Ըստ նախագծի ճնշումային խողովակաշարը պետք է թաղված լիներ, բայց փաստացի ամբողջովին վերգետնյա էր:

11.«Սուրբ Աղբյուր» փոքր հէկ-Նախագծով կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված է «Տոյկա» տիպի բիոզուգարան, որն առկա չէր:

Գլխամասային ջրընդունիչ հանգույցում բետոնային ջրթափային պատվարի աջ մասում նախատեսված է 8մ ընդհանուր երկարությամբ աստիճանաձև ձկնանցարան, որով պետք է ապահովվի նաև էկոթողքը, սակայն իրականում այն նպատակին չէր ծառայում, ջուր չէր հոսում՝ ցամաք էր: Բնապահպանական ելքը բաց էր թողնվում գետ հէկի համար իրականացվող ջրառի հատվածում՝ անկազմակերպ ջրթափի տեսքով, որը կասկածի տակ էր դնում էկոթողքի պահպանումը:

12.«Վայոց» փոքր հէկ-Գլխամասային ջրընդունիչ հանգույցում ըստ նախագծի ջրթափ պատվարը պետք է ունենա 2 սեկցիա՝ բաժանված 0,5մ հաստությամբ բետոնե միջնապատով, յուրաքանչյուր սեկցիայի ջրթափային ճակատի երկարությունը 5մ, սակայն փաստացի ջրթափ պատվարը սեկցիաների բաժանված չէր և ուներ մոտ 7մ ընդհանուր երկարություն: Նախագծով նախատեսված է երկաթ-բետոնե աստիճանաձև ձկնուղի, կազմված մուտքամասից ու ելքամասից, 11 բաժանմունքից, ընդհանուր երկարությունը 14մ, լայնությունը 1մ, սակայն փաստացի ձկնուղի կառուցված չէր: Կային աղբաորսիչ ճաղավանդակներ, որոնք մանրաձկների մուտքն արգելափակող չէին:

13.«Վարդահովիտ» փոքր հէկ-Ըստ նախագծի գլխամասային հանգույցում բետոնային ջրթափային պատվարի աջ մասում նախատեսված է աստիճանաձև ձկնուղի, սակայն փաստացի ձկնանցարանը բացակայում էր: Էկոթողքն ապահովվում էր մասամբ պատվարի վրայով, մասամբ էլ տղմազտարանով, ինչը ջրասակավ ժամանակ հնարավոր չէր լինի ապահովել, բացակայում էին նաև ձկնապաշտպան մանրանցք ցանցավանդակները:

Եղեգիս գետի և նրա վտակների վրա շահագործվող բոլոր փոքր հիդրոէլեկտրակայանների գործունեության ուսումնասիրությունների և դրանցում տեսչական ստուգումների արդյունքների հիման վրա կկայացվեն որոշումներ՝ գետում ստեղծված աղետալի վիճակը կանխելու համար:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն
Ն. Սարոյան Հեռախոսներ 028123050, 094632556